Արձանագրություն N 3

Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/100 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

27.06.2019թ.
Ժամը՝ 10:45

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերում առկա անխամապատասխանության շտկման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից կողմից սահմանված ժամկետում շտկվել է ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները և մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ	Բավարար
«Բագարանի բարիք» ՓԲԸ	Բավարար
Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ	Բավարար
ԳՐԻՏԻԳ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/100» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Բագարանի բարիք» ՓԲԸ -ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման

ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել պետական եկամուտների կոմիտե:

4.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 4-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:45-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

---------- Ռ. Աբրահամյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան